ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ПРОФСОЮЗ РАБОТНИКОВ ГОСУЧРЕЖДЕНИЙ АРМЕНИИ

UNION OF STATE, LOCAL GOVERNMENT AND PUBLIC SERVICE EMPLOYEES OF ARMENIA

«26» օգոստոսի 2024թ.
N 52-01

Երևանի քաղաքապետ
Տիգրան Ավինյանին

Հարգելի պարոն քաղաքապետ

Հայտնի է, որ Երևանի քաղաքապետարանի ցածր և միջին օղակի համայնքային ծառայողների աշխատավարձը մինչև հարկումը տատանվում է 272 000 ՀՀ դրամից (առաջին կարգի մասնագետ) մինչև 408 000 ՀՀ դրամ (բաժնի պետ):

Համաձայն ՀՀ Վիճակագրական կոմիտեի տվյալների՝ նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը, որը հաշվարկված է ըստ ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակված մեթոդաբանության, 2024թ. II եռամսյակում կազմել է 77 065 դրամ: Միևնույն ժամանակ, համաձայն Կոմիտեի տրամադրած վերջին տվյալների, ՀՀ տնային տնտեսություններում ընտանիքի անդամների միջինացված քանակը 3.4 հոգի է: Այսպիսով, ակնհայտ է, որ միջին օղակի համայնքային ծառայողների նույնիսկ ամենաբարձր աշխատավարձը, որը բաժնի պետի համար հարկումից հետո կազմում է մոտ 300 հազար դրամ, անբավարար է ընտանիքի նորմալ գոյությունը և նվազագույն ծախսերը երաշխավորելու համար, չհաշված, որ աշխատողների զգալի մասն ունի նաև հիփոթեքային վարկեր, ապրում է վարձակալությամբ, ընտանիքում ունի վճարովի հիմունքներով սովորող ուսանողներ և այլն:

Նման սուղ սոցիալական պայմանները հանգեցնում են նրան, որ համայնքային ծառայողները ստիպված են որոնել լրացուցիչ եկամտի աղբյուրներ՝ իրենց և իրենց ընտանիքների կենսապահովման համար, չնայած որ, համաձայն օրենսդրության, նրանց չի թույլատրվում զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

Միաժամանակ, վերջին շրջանում կառավարության կողմից ջանքեր են գործադրվում հետզհետե հարկային դաշտ բերելու ծառայությունների տարբեր տեսակներ, որոնցից է, օրինակ, էլեկտրոնային հարթակի միջոցով ուղևորափոխադրումը, ինչը համայնքային ծառայողների մի մասի համար լրացուցիչ եկամտի աղբյուր է հանդիսանում: Ողջունելով ոչ ֆորմալ տնտեսությունը հարկային

Հասցե՝ 0010, ք. Երևան
Վ. Սարգսյան 26/3, 501 ս.

Address: 26/3 V. Sargsyan st,
Office 501, Yerevan, 0010

Адрес: 0010, г. Ереван
ул. В. Саргсяна 26/3, офис 501

Tel: +37410580582 URL: www.arhmiutyun.org Email: profrosgu@gmail.com Facebook: facebook.com/arhmiut

դաշտ բերելու կառավարության քաղաքականությունը՝ միևնույն ժամանակ փաստում ենք, որ այն անհնարին է դարձնելու համայնքային ծառայողների համար նման ծառայություններում ներգրավվելը: Չնայած, որ համարում ենք, որ համայնքային ծառայողները չպետք է ստիպված լինեն աշխատանքային ժամերից դուրս այլ աշխատանք կատարել, և դա չի բխում քաղաքի շահերից ու բացասաբար է անդրադառնում համայնքային ծառայության համբավի վրա, փաստում ենք, որ ներկա պահին լրացուցիչ եկամուտ ունենալն աշխատողների համար անհրաժեշտություն է:

Վերոնշվածից ելնելով, որպես պետական ու համայնքային աշխատողներին միավորող ճյուղային հանրապետական արհմիություն, կոչ ենք անում վերանայել ցածր և միջին օղակի համայնքային ծառայողների վարձատրության չափերը՝ ապահովելով կենսապահովման համար բավարար մակարդակ:

Դա ոչ միայն կբարելավի համայնքային ծառայողների կյանքի որակը, այլ նաև կօգնի Երևանի քաղաքապետարանին պահպանել բարձր որակի ծառայությունների մատուցումը բնակիչներին՝ միաժամանակ նվազեցնելով սոցիալական լարվածությունը:

Հարգանքով՝
Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողների արհմիության նախագահ՝ **Անահիտ Ասատրյան**

հաստատված է էլ ստորագրությամբ